

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻՍ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրս
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ


Ծրանշման տողը
20 ամսիկով



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ե Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Ա Մ Ե Ն Ջ Ո Ր Ե Ք Շ Ա Ր Թ Ի Ե Ի Շ Ա Ր Թ



Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Դրոշմը եւ
չեն տրոշիր

ՓՈԽԱՐԻՆՈՒԹԻՒՆ

Արձակուրդի պատճառաւ մեր բաժանորդներուն ներկայ տարեշրջանէն քանի մը թիւ պակաս թերթ տրուելուն փոխարէն, կու գանք յայտարարել թէ «Մրուսնջ Հայկական» երգարանը կամ «Հայկական Զոհեր» պիւրը, որն որ կրնարեն, միայն կէս ֆրանքի փոխարէն իրենց պիտի ղրկենք:

ՄԻՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁԸ

Տարիներ տեւող յիմար վէճերէ ետք, Յեղ. անշատ կուսակցութեանց յիացումի խնդիրը հետզհետէ խօսքէ դործի, կարելիութենէ հաւանակաւ յուժեան, վիճարանութենէ բանակցութեան կերպարանք մը ներկայացնելու երեւոյթը կառնէ: «Ինչ ջանքեր, ինչ ընդհարումներ, ժամանակի ինչ կորուստ—ըսելու պիտի թելադրուեն մեր թերթի թիւները մատնանշելու նուազ զգուշաւոր մէկը: ու այս ամէնքը միմիայն բանակցութեանց սկզբնաւորութեան համար: Դեռ ինչե՞ր ուրիշ մեզ վերապահուած չէ, մինչեւ որ պայմաններու վրայ համաձայնութիւն գոյանայ:

Արդարեւ, մարդ կապչի կը մնայ երբ կը խորհի վերջին հնգամեայ շրջանին մէջ միութեան խնդրով զբաղելու պաշտօն ունեցող պատասխանատու մարմիններու վրայ, որոնք անմիջապէս իրարու հետ բանակցութեանց մտնելով, իրենց առարկութիւններն ու պայմանները սեղանին վրայ դնելու, իրերու կարգին զարհուրելի մէկ ըմբռնումով, բանակցութեան մտնելու համար պայմաններ առաջարկելով կը գոհանան, մինչ ճշգրիտ ու եւէ պայման ԲԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՍԿԱՆԵՍ ՍԿԱՆԵՍ ետք պէտք էր ըլլար: Այս պարագան ինքնին բաւական պիտի համարուէր ճշգրիտ պաշտօն մը տալու հոգեկան տրամադրութեանը ու մտային կարողութեանը վրայ ինքզինքնին Յեղ. ւեճերու միացումին հաշտ ու բարեացակամ հոշակողներու, որոնք միութեան բանակցութիւնները վարելու կոչուած էին:

Առ այժմ կը զգուշանամ մանրամասնութեանց մէջ մտնելու, նորաժողովի թիւրիմացութեանց, նորաժողովի առարկութեանց առիթ չի տալու համար: այսօր որ Յեղ. կազմակերպութեանց պատասխանատու մարմինները, ժողովրդային միութեանսէր հզօր հասանքի մը ազդեցութեանը տակ, տրամադր' կերելին, գոնէ երկու-

թապէս, իրենց սինթոր առարկութիւնները թողով, միանալու միջոցներուն վրայ բանակցելու, առարկաւորանալի, անհերքի պիտի ըլլար որ անհատ մը, ինչպէս կուսակցութիւն մը, ազգային դատին յաջողութեանը բարձրօրէն անհրաժեշտ պայմանի մը իրագործումին իսկ, փափկանկատութիւնը չունենար վերադարձէ զգուշանալու մերձեցում գոյացնելու ետեւէ եղողներու կուսակցական կամ անհատային ինքնասիրութիւնը:

Այս պատճառաւ, միութեան հետամուտ ամէն հայ խորին ցաւով կարգաւորուած ըլլալու է նոր «Յաւելուած»-ը զոր Դրոշակի խմբագրութիւնը հրատարակ հանց: Եթէ կուսակցութեան մը անվիճելի պարտականութիւնն է միանալէ ստաջ շրջանայեաց պոռնիլայնայիններու նկատմամբ որոնց անցեալը կամ բարոյական նկարագիրը գոհացուցիչ ապահովութիւն մը ներքնայնէ հեռի է, ոչ նուազ կարեւոր է որ այդ «շրջանայեաց» նկատողութիւնները երեւան գան իրենց պատշաճ տեղը, պարագաներու պահանջած առեւտրին:

Եթէ երբէք Դրոշակի խմբագրութիւնը, Միութեան նամակին ծանօթանալէ ետք, անհրաժեշտ կը համարէր կարգ մը մարդիկներու Յեղ. ապարէզէն ընդմիջող հեռացումը, պարտ էր ԲԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄՏԵԼՈՒՄ անոնց հեռացումը իւր «առաջին պայման» դնել: կամ եթէ «բանակցութեան կերպ»ին մասին վերապահումներ ունէր, պէտք էր որոշապէս յայտնէր անոնց, որոնք հետ բանակցութիւնը կատարուելու է թէ ինչ միջոցով կողմնոր ռաւանկցութիւնները սկսուին:

Իսկ եթէ Դաշ. պաշտօնաթերթը, Հնչ. կազմակերպութեան անդամակցող անհատներու ամբողջութիւնը Յեղ. գործին վիճառող տարր մը նկատելով, վերջնապէս որոշեր էր բանակցութեան ամէն առաջարկ մերժել, իր այդ որոշումը հրապարակաւ յայտնելու էր:

Արդ, ոչ մինչ ոչ միւսը. ոչ բանակցութիւն, ոչ մերժում:

«Յաւելուած»ին վերջին խմբագրութիւնը կը յայտարարէ թէ բանակցութեանց սկսելու համար Հնչ. միացեալ նորընտիր վարչութեան կազմութեանը պիտի սպասէ. շատ լաւ բայց ինչպէս մեկնելու է Հնչ. առժամեայ կեդրոնին դէմ «Յաւելուած»ին պարտական ծանր տրամադրութիւնները, երբ արդէն Դրոշակի խմբագրութեան ուղղուած պաշտօնական նամակ մը, Հնչ. օրինաւոր վարչութեան ընդփոխ ընտրութեան, առժամեայ կեդրոնին պաշտօնէ դադարումը կը ծանուցանէր: Ինչ թելադրանքի վերադարձ է քաջուելու վրայ եղող կեդրոնի մը դէմ այդ ձախող

հրատարակութիւնը, եթէ ոչ սկսուած գործը անկարելի ընելու որոշ դիտումի մը:

Մանաւանդ որ շատեր իրաւամբ մտածել էին թէ Դրոշակի կողմէ որեւէ բարութեան կամ առարկութիւն նախապէս գոյութեան իրաւունքը կորսնցնելու դատաւարաւոր էր նոր կեանքի պաշտօնական հրատարակութիւններէն ետք, որով եթէ միութեան համար անհրաժեշտ համարուէր, «Հնչ. կեդրոնը պատրաստ էր ամբողջովին հրաժարի, Հնչակեան անունը ու պաշտօնաթիւնը ջնջել: շատեր իրաւամբ մտածել էին թէ այս հրապարակային ռաջ ու որոշ յայտարարութեանց առջեւ, Դրոշակի խմբագրութեան համար ընելիք տարբեր բան չէր մնար, եթէ ոչ անմիջապէս բանակցութեան մտնելով, այդ յայտարարութեանց որ աստիճանի հիմնաւոր ու ճշգրիտ ու իրական ըլլալը ստուգելու ջանալ: Մինչ հրաժարելու վրայ եղող կեդրոնի խնդրոյ առարկայ ընող «Յաւելուած»ին հրատարակութիւնը առիթ առաւ Հնչ. կուսակցութեան նամակներու «Յաւելուած»ով մը պատասխանելու, այնպէս որ երկու մարմիններու մէջ յարաբերութիւնները արդէն իսկ լարուիլ կսկսին, երբ տակաւին 6-7 տարիի լղճուկ վէճերէ ետք, բանակցութեան հետքն իսկ չը կայ:

Մինչեւ երբ սակայն այս այսպէս տեւելու է. մինչեւ երբ կուզեն շարունակել ԲԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՍԿԱՆԵՍ առաջ առարկութիւններ ներկայացնելու, միմիայնք առաջարկելու այս անձոնի կատակերգը: Ակներեւ է թէ միութեան ռազմադր ստուարաթիւ գասակարգի մը համբերատարութիւնը քիչ մը չափէն աւելի փորձելու անխոհեմութիւնը կը գործեն այնպիսի մարդիկներ որոնք զոգցեա ճիգ մը ունին պայքարող ուժերու միացումը անկարելի դարձնելու մտքով նորաժողով արգելքներ որոնելու: ակներեւ է թէ այնպիսիները անհամ կատակ մը ընելու վրայ են միութեան հետամտողներու ոչ-արհամարձիք գասակարգի մը դէմ, որ յաւիտենապէս պատախի նոյն բարբառնալիքները ունկնդրելէ տաղաւորացած, ճակատագրօրէն պիտի երթայ ստուարացնելու շարքերը այն կազմակերպութեան որ միութեան սիրոյն տրամադրի կը ըլլայ զոհելու թէ իր անունը, թէ իր թերթը, թէ իր դեկաւոր վերին մարմինը:

Պիտի ուզէին, պիտի համարձակէին այս ծայրայեղ միջոցին մղել կամաւորութիւնը անոնց որոնք տարիներէ ի վեր միութիւնը կը պահանջէին: Կը սիրենք տակաւին այս մասին թերահաւատ գտնուիլ: կը սիրենք յուսալ թէ միութեան համար բանակցե-

լու պաշտօն ունեցող մարմինները պիտի չը թերահաւատ նկատողութեան առեւելու միութեան համակեր հանրային հզօր կարծիքը ու այդպէսով ապագային մէջ նոր անկարգութեանց, նոր վէճերու տեղի չը տալ: Այժմ որ Պիւրսէլի մէջ ընդհուպ գումարուելիք հայաստաններու միջազգային համաժողովը խորհրդակցութիւն պիտի կատարէ հայկական խնդիրը Եւրոպայի խորհրդարաններու մէջ յուզելու ու պետութեանց վրայ ճնշում բանեցնելու միջոցներուն վրայ, աւելի քան բնաւ կարեւոր է որ կեդրոնէն, ջալդուելէ զատ մաքառելու ալ ատակ ժողովուրդ մը ըլլանք: այս ամէնք: Անորակելի ամօթ մը պիտի ըլլար, ազգային զարհուրելի անբարոյացումի մը նշանը պիտի համարուէր, այս պայմաններու մէջ, մեր կողմէ աւելի երկար ատեն համաձայնութեան յանգելու անկարողութիւն մը, երբ տարներն իսկ կը պատրաստուին, Անտառ Ֆրանսի բառերով «մարտիրոս ազգէն ողջ մնացած» հատուածը «յանուն մարդկային սեռի գթութեան» փրկելու միջոցներուն վրայ խորհրդակցելու:

Տ. Էրեստան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁՔ

Վերջին քանի մը շաբաթուան մէջ քաղաքական նշակելի դէպքերն են՝ անգլոսոսէր հաշտութեան կնքումէն վիճ' որուն պայմանները մանրամասնաբար ծանօթ են մեր ընթերցողներուն, Ֆրանսայի հանրապետութեան նախագահին և Պուլկարիոյ իշխանին ու աւագանիներուն Ռուսիա այց' լուծելը, Էտուարտ Թագաւորին ծանրապէս հիւանդութիւնը՝ որ թագադրութեան աշխարհագրորդ հանդէսին յետաձգումին պատճառ եղաւ, և, ինչ որ էն գլխաւորն է քաղաքական աշխարհի համար, Երրեակ Զինակցութեան վերանորոգումը:

Արդէն միւր նախորդ մէկ յոդուածովը ըսած էինք թէ Մ. Լուպէի Զարին տուած այցելութիւնը ներկայ քաղաքականութեան վրայ նոր փոփոխութիւն մը բերելու բնութիւն ունենալէ հեռի է, իսկապէս ալ երկու ղեկավար պետութեանց ծանօթ յարաբերութիւն-

ներուն միջև նոր բան կը չաւելցուցայ ալ չայցը :

* * * Վարդ Պուլկարիոյ իշխանին, նախարարներուն և Սոսրանիէի նախագահ Տէսո Յանքովին Չարը այցելելուն, սա շատ մը էնթալթրոթիւններու դուռ բացաւ : Յէրտինանտ իշխանին ուսական ուսանին մէջ եղած վեհապետական բացառիկ ընտանեկութիւնը երեւակայութեանց ու կարծիքներու լաբիւրինթոս մը ստեղծեց : Շատեր ըսին թէ Պուլկարիոն անկախ թագաւորութիւն պիտի հռչակէ, ոմանք լուր տարածեցին թէ իշխանը Բեդերապուրի մէջ ուսնոսկարական դաշնագիր մը ստորագրած է, որով Ռուսիան Պուլկարիոյ ամբողջութիւնը պահպանելու համար աւելն միջոցներով պիտի պաշտպանէ զանի դրացիներուն դէմ, և փոխադարձաբար՝ երբ Ռուսիան Արեւելքի մէջ խնդիր մը ունենայ՝ պուլկար բանակը անոր տրամադրութեամբ տակ պիտի գտնուի և Ռուսը միջերանցներ պիտի հաստատէ Պուլկարէն վառնա ու է կէտերու վրայ : Այս վերջին տարածախոսութիւնը՝ որ եւրոպական բոլոր կարեւոր թերթերուն մէջ արձագանք գտաւ, գեռ աւելի օր հիմնովին հերքուեցաւ Պուլկարէնապր. գործակալադրեան կողմէ : Այսօր Երեւոյթէն գտնելով, ցարդ քառաձեռնուն մէջ էն ճշմարիտը միայն այն է թէ Չարի կառավարութիւնը պուլկարական նոր փոխառութեան խնդրոյն առթիւ բաւական նպատակաւ ազդեցու-

թիւն մը ներգործեց, որով կարելի եղաւ առանց մոնոթոյի փոխառութեան պայմանագիրը կնքել :

* * * Երբեակ Չինակցութեան վերանորոգումը արդէն ամիսներէ ի վեր նախատեսուած իրողութիւն մըն էր : Բայց կարծիքներ կային թէ այդ վերանորոգումը անկարելի ըլլայ : որովհետեւ Ֆրանգո-խալապան համաձայնութիւնը ու սերտօրէն մերձեցումը ինչ ինչ խնդիրներով, և նորիցէս Աստրիոյ ու Ռուսիոյ միջեւ գոյացած Պալագանեան համաձայնութիւնը լուրջ արգելքներ կը նկատուէին Երբեակին վերանորոգուելուն դէմ : Սակայն զէպքերը ու պաշտօնական արտայայտութիւնները ցոյց տուին թէ այդ նկատումները ճիշդ չեն և թէ Երբեակ Չինակցութիւնը կազմող երեք պետութիւններէն իւրաքանչիւրը ազատ է ու է պետութեան հետ թէ՛ քաղաքական և թէ՛ տնտեսական յանձնառութիւններ ու կապակցութիւններ հաստատելու :

Այս պարագան Եւրոպայի խաղաղութիւնը պահպանելու մեծ սատար մը պէտք է նկատուի : որովհետեւ երկու մեծ զինակցութեանց մէջ մի անգամ իրենց ընդդիմակաց խումբին մէջ կամ միւս անգամին հետ բարեկամօրէն կապուած է ալլելա : Երբ կաթոլիկ Նոյնիսկ թէ այս եղանակով փոխադարձ համաձայնութիւնները օր մը պետութեանց ուրոյն ու յարաճուն սպառնալիքներէն ևս պէտք չը պիտի ձգեն : Այս կարծիքը աւելի հաւանականութիւն կը ստանայ

մանաւանդ երբ նկատենք թէ Երբեակ ու Երկեակ Չինակցութիւններու կալմութիւնն ի վեր եւրոպայի մէջ պատերազմ չէ ծագած :

ԳՈՐԴՆԵՅ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՐԱՅԱՆ ՍԱՆՏԱՆԱԳԼԵՒԻՑ

ԴԱՎՐԷԹ, 6 Յունիս

Ճակատագիրը կարծես դատապարտած լինի Սալամաուցուն միշտ տանջուելու և հարստահարուելու :

Հազիւ ուրեմն ազատուել էր թանկութեան ճիրաններից և թեթեւացել մի քիչ կառավարչական պատշաճանների կամայականութիւնից, ինչպէս նաեւ եկեղեցիների շահատակութիւններից, զօրադրութիւն է ունենում այսօր հիւր ընդունելու Պարսկական բանակին : Բաղկացած մի քանի հազար զինուորներից :

Դեռ իրենց կառարեալ բացակայութիւնը և պաշտի չլրացումը իրաւունք են տալիս իրաքանջիւր զինուորներին գողտնալու և յախտակելու ազատութեամբ Երկրագործի և պարտիզանի ախտաթիւնն պետական կողմից և միջոց իսկ թալանելու և թեւեկներին : Չինակցական այս շարժման պատճառը յայտնի չ'իջնելով՝ ժողովուրդը զանազան եմթաղութիւններ է անում : Բայց եթէ ինկատի առնուի Տաճկաց սահմանում եւս տեղի ունեցած շարժումը՝ դուռար չի լինում հետեւեցնել որ քաղաքական կարեւոր հարցեր կան լուծուելու երկու համակարգի ազդելի մէջ : Մինչև այս օրեր տեսնուած կամ յառաջ էր որ Պարսիկ և Օսմանեան պետութիւնները

կանոնաւոր դօրաց բանակով հնտեւէին իրենց սահմաններից յախտակուած աւաքին : Բայց անցեալները Օսմ. կառավարութիւնը 250 հետեւակ և 50 հեծեալ զօրքերից բաղկացած մի բանակ քաղաքական և զինուորական պետի հրամանատարութեան տակը ուղարկել էր Պարսից սահմանում գտնուող Սոմայի գաւառը այն պատճառով թէ յետ վերադարձնել է ուղում Գարդար և Երկակ քիւրտերի ձեռքով Աղբակից յախտակուած աւաքը : Բանակը լաւ հիւրասիրուելուց յետոյ ինչեւէ քիւրտ աշխարհների պետերից, ետ է դարձել առանց ու եւ է աղմուկի և ցոյցի :

Այս զէպքից մի քանի օր յետոյ 200-ից աւելի հեծեալ քիւրտերը ցերեկով յարձակում են գործում Սալամաուի Հին-քաղաք կողմէն բաղնաւարդ աւանի վրայ և իրենց հետեւող պարսիկներից երկու քիւրտ ծանրապէս վիրաւորուեց յետոյ տանում են 50 ի մօտ ձիւրը և սեւաւաւանները : Ականատիները վկայում են որ յարձակողների մէջ կային ոսանների երկու կողմում գտնուող քիւրտ աշխարհներ թեւեկ ևս : որով և մի մասամբ հաստատուում է այն կարծիքը թէ տեղեւոյ միմեանց թշնամի համարուած Երկակ և Մարգիկ ցեղերը (Չարի ու յայնի և Շարաֆ բէկի էլիւն) իսկպէս յարեկամներ են եղել նոյն պէս անշնի գաւառութեան պատկանող և իրենց հարեւան եղող միւս քուրտ ցեղերին (Թուալիսից մի քանի օր ուսնալ գաւառի կառավարիչը ձերբակալել է տալիս Շարաֆ բէկի եղբոր որդւոյն և հանել է տալիս նրա գրպանից այն յանձնարարագիրը, որը Շարաֆ բէկը գրել էր Սալամաուի գաւառի քիւրտ Եճիսից մէկին յիւր թիւնների տալու համար Հին-քաղաքի վրայ յարձակում գործելու եկող իւր մարդկանց : Չարի ա-

Ա. ԵՐԵՎԱՆԻԱՆ (24)

ԹԻՒԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԲԱՓԱՌԱՅԱՆ ՄԱՐԴԵ...

— Ինչ գեղեցիկ բան է այս... հաւատայ որ մեծ իս կուտամ :
— Երկու աւազակները ժայռերու տակ թափառելէ ետքը յանկարծ իրենց ընկերով դիակը չ'աւարեցին որ անշունչ վիճակի մը մէջ կը մնար :
— Վա՛տ... բացադանչեցին աւազակները : Մեր սիրելի ընկերը սպաննեց :
— Կատաղութեամբ լեցուած եկան իմաց տուին մեծաւորին, ու կարաւանէն բաւական հեռու քլուրի մը վրայ նստած էր և կողոպուտներու կըսպասէր :
— Շուտով թող տուէք որ կարաւանը հեռանայ, գոչեց աւազակապետը : Բայց մարդասպանը հոտեղ բերէ՛ք :
Աւազակները վերադարձան ու մեծաւորին հրամանը կատարեցին :
Արդարեւ կէս ժամուան մէջ կարաւանը՝ բողբոլիկ կողոպուտուած՝ ճամբայ ինկաւ : Իսկ Վանական քաջկոտ ունեւոր աւազակապետին առջին տարուեցաւ :
Աւազակապետը խորին ուշադրու-

թեամբ գիտեց Վանականին կերպարանքը : որ զինքնուան մօտ թին մէջ հազիւ կը նշմարուէր, դիտեց այդ անվեհեր մարդուն կեցուածքը ու հարցուց :

— Դո՛ւն սպաննեցիր մեր ընկերը :
— Այո՛, ևս սպաննեցիր... պատասխանեց Վանական՝ աներկիւղ ձայնով մը :
— Պատճառը...
— Ի՞նչու պատճառը կը հարցունէք :
— Եթէ չը սպաննէի զի՞քը, ա՞թիկա պիտի սպաննէր զիս :
— Ոչ, չի պիտի սպաննէր, եթէ դիմադրութիւն մը չընէիր :
— Ձեմ հասկնար... միթէ չապիկս վրայէս հանող մարդը սպաննած չըլլա՞ր զիս :
— Հը՛րմ... ժմաց աւազակապետը՝ շարժելով իր գեղեցիկ ու պարկեւելի զլուրը՝ Շատ աղէկ, ի՞նչ ունէիր որ չէիր ուղեր յանձնել :
— Ե՛ս :
— Այո՛, դո՛ւն :
— Բան մը չունէի... միայն թէ գաշոյն մը ունէի :
— Ո՛ւր է գաշոյնդ :
— Սա՛ աւազակը խեց ձեռքէս :
Աւազակապետը Վանականին մատնախիշ ըրած մարդուն երեսը նայեցաւ : Աւազակն զոգողալով մօտեցաւ ու ծոցին մէջ պահած գաշոյնը յանձնեց :
Հսկայ մարդը, — Կոնսերու տէրն և զոգ այդ հոշակաւոր աւազակապետը, յանկարծ բոլոր հոգիով այլայլեցաւ, երբոր գաշոյնին վրայ նայեցաւ... Կարծես թէ կայծակ մը ինկաւ զլիսին

ու իր ուղեղը տարալից գանկին տակ :

Մէկէն ի մէկ չկրցաւ խօսիլ : Նայեցաւ, ինչե՛ք, պատեալին մէջ դրաւ ու նորէն մերկացուց... վերջապէս կրկնեց բոլոր ըրածները : Յետոյ՝ ճիգ մը ըրաւ ինք իր վրայ, չանալով զըսպել զինքը խռովեցնող պատճառները, չանալով ծածկել զինքը խղճող հետաքրքրութիւնը...
— Բո՛ւկ է այս գաշոյնը, հարցուց աւազակապետը :
— Ի՞նչ է, պատասխանեց Վանական :
— Ի՞նչ ազգ ևս դուն :
— Հայ եմ :
— Յիւ՞ն...
— Այո՛ :
— Անկարելի է՛... ֆրայ մը չուենար ասանկ գաշոյն մը :
— Վանական լուեց :
— Եթէ ֆրայ մըն ևս, շարունակեց Աւազակապետը, ըսէ՛ նայիմ որ կողմերէն ես :
— Վանեցի եմ :
— Վանայ քաղաքէ՞ն :
— Ո՛չ... գնդերէն եմ :
— Բաւական է : Հիմակ դիտես ի՞նչ պիտի ըլլայ քու պատիժդ :
— Ձեմ գիտեմ... ինչ որ կուզէ՛ք՝ կրնաք ընել :
Աւազակապետը ձեռքը ճակտին տալու ու վայրկեան մը մտածեց : Յետոյ ծանր ու արհամարական եղանակով մը ըսաւ :
— Հէյ կիտի ֆրայ, քու արեւնդ անարդ արեւն մըն է... Բայց դուն քաջ մարդ մը կերեւաս : Փոխանակ

սպաննելու քիզ, կը հրամայեմ որ մեր բնկերներուն ծառան ըլլաս ու մեզի հետ այս լեռներուն մէջ թափառես : Ասկից աւելին մի՛ սպասիր : Ահա՛նա կան քուրտի մը համար նախատիւր մըն է անարդ արեւն մը մէջ իր ձեռքը թափ խել :

Այս հրամայական խօսքերէն ետքը, չուանով մը կապիլ տուաւ Վանականին ձեռքերը, ձիու մը վրայ նստեցուց, աւազակի մը պահպանութեան տակ, ու հեռանալու նշան տուաւ ամբողջ խումբին, որ քանակու հոգիէ կը բաղկանար :

Լուսուն դէմ՝ աւազակապետը Լազիստանի ամենէն ամայի ու ամենէն ապահով լեռներու մէջ կը գտնուէր :

— Տղե՛րք, հրամայեց աւազակապետը, պէտք է պաշար տանելու երթաք : Դո՛ւն, ծաղո՛ւ, առ հետդ երկու հոգի ու Համէն գնայ : Իսկ Եճիւն ալ թող տասը հոգիով գէպի Զիււան-Տաղի կողմերը յառաջանայ, դիտելու համար թէ՛ կարաւանը կարիւնէն ո՛ր հասած է... :

— Դուք ալ լեռներու մէջ պահպանութեան գացէ՛ք, շարունակեց աւազակապետը մնացեալ ընկերներուն, ուրոք անմիջապէս հրամանը կատարեցին :

Արդ, աւազակապետը՝ որ ապագածին տակ փոռած ընտիր գորգի մը վրան նստած էր, գրեթէ միշակ մը նայ Վանականին հետ, որ քանի մը քայլ հեռու կը կենար՝ ձեռքերը կաշկանդուած դիրքի մը մէջ :

(Եւրոպական)

դան երբ կիմանայ այդ, կառավարիկէ կառավարչին ազատ արձակելու կալանաւոր քրտին, առարկելով թէ իրեն հիւրն է, բայց կառավարիչը չէ ընդունում: Չափար աղան եւս զայրացած թալանել է տալիս կառավարչի սեփական գիւղը:

Լսուած է որ Օսմ. կանոնաւոր զօրաց մի շուկատը միացած համիտիէնէրի հետ յարձակել է գիւղերով Սոմալի վրայ եւ ջարդել է անխնայ երեք գիւղի քիւրտ բնակիչներին, բայց ինքն էլ ծանր կորուստներ է ունեցել իրեն ճանապարհը կտրող քիւրտերից: Երկու օր առաջ այստեղ ժամանեց Խոյի նահանգապետ, իբրեւ ընդհ. հրամանատար Սալմաստում բանակ դրած զօրքերի: Նա զբաղուած է այժմ Թրքա-պարսկական սահմանում հիմնուելիք պահականոցներին շինութեամբ եւ այն կամուրջների վերանորոգութեամբ, որոնք զանաւոր ինչ Սալմաստից դէպի սահմանապահ ձգուած ճանապարհների վրայ: Կարծուած է որ թնգանթներին փոխադրութեան համար լինին այս պատրաստութիւնները:

ՊԱՐԳԵՆԻ

ՅԱՐԳԱՆՔԸ

Որո՞ւն կուտանք յարգանքը, կուռնողներուն, գործողներուն, մեռնողներուն:

Իրականութիւնը, որուն կուտանք պիտի կրնայինք բոլոր մեր հպարտ ու զահուսկ «այո»ն, չզիջուին է սակայն այնպիսի տարբեր երեւոյթներու, որոնք անմիջապէս հակառակը պիտի մեղկուտան: Եւ կը խորհնք դուռնութեամբ թէ ինչպէս որ չենք գիտեր մեր աչքին առջեւ օր քան օրէ աւելի եւ աւելի կուտանող կեղտերուն ու զայլաթիւններուն հանդէպ սրբազան զայրոյթով վերգործուիլ, ինչպէս որ չենք գիտեր մեր աչքին առջեւ տարիներով սուղացող ժանտ օձերու գլուխը վայրկեան պէս ջախջախել, ինչպէս որ չենք գիտեր պատժել կամ վիշտակապէս թքնել հանրութեան շահերուն եւ զգացումներուն հետ խնդկաւոր սկողներու լպիրշ երեսին, այնպէս ալ, տրամաբանօրէն, զարմանալի չէ որ չը պիտի գիտնայինք ու չենք գիտեր մեր հոգիին մէջ զգալ դիւցազնական գործերու եւ կեանքերու մասին գորովագին յարգանքի եւ պաշտումի այն զգացումը որ հոգիին մաքրութենէն կը ծնի եւ հոգիները մեծցնելու կը ձգտի: Սերօքներու եւ Գնունիներու պէս պաշտելի անուններուն սրբապիղծ յեղեղումները յայտնի խաչագողներու, վատերու եւ ցածերու բերին մէջ՝ խորին ցաւ պէտք էին պատճառել մեզի եւ կախաղանի խորխոր ճոխններուն ի պատասխան լուռող բողի լացերը անողորմելի զայրոյթ՝ մեր վերաւոր սրտերուն մէջ: Հայ ժողովուրդը — սգաւոր մայր մը — չը պիտի գիշանէր, որ իր զակին լուսեղէն գէմքին վրայ կոկորդիլոսի արցունքներ թափուին, չը պիտի

հանդուրժէր որ յեղափոխութեան անարգ փառասիրտները իրենց սեւ հոգիներէն բղխող կեղծ հառաչանքներով, մօր մը անդամանելի վիշտը հեգնելու, ծաղրելու լրբութիւնը ունենային, թող չը պիտի տար մանաւանդ, որ իր զգացումներու եւ իր սիրած անուններու անարգ շահագործումով շփացած վատեր օր մը իր մէջ ամենէն սրբազան փափաքի մը, միանալու փափաքին, իրականացմանը միջոցին, կրկին դուռններին առաջ տանին պշտութեամբ եւ զարշահուութեաննոր երանգներով միտուելու հանրային եւ յեղափոխական կեանքը: Չէ՛, ալ պիտի չուզէր զինքը թունաւորողներուն, իր թուութիւններով եւ տգիտութեամբ պարարուող տղրուկներուն տածել ստրուկի յարգանքը, եւ մինչ յարգանքի եւ պաշտումի ամբողջ հեղեղը պիտի լար իրեն համար կուռնողներու եւ զհուռնողներու թաղ յիշատակին առջեւ, այդ յիշատակին մէջ եւ միմիայն այդ յիշատակին մէջ պիտի կարողանար տեսնել նաեւ մեծութիւնը այն յաճախակի պատրանքներուն, զոր ունեցեր էին իր հաբազատները երէկ՝ խաբուսիկ եւ ոճրագործ ներշնչումներու ազդեցութեան տակ եւ զորս դեռ ինք չը թոյլատրէր վիշտակեանքէն: Այդ յիշատակին եւ այդ պատրանքներուն մէջ պիտի ճշգէր նաեւ իր ճշմարիտ ուղին:

Եւ այսպէս պիտի վարուէր եթէ իրեն համար գործողներուն, իրեն համար զոհողներուն հանդէպ ճշմարիտ յարգանք մը կրէր իսկապէս, եթէ մարտիչին մահը փոխանակ իր կուսակցական սեփականութիւնը շուրջու, փոխանակ սրտի ապուշ եւ անխոստովանելի բերկրանք մը պատճառելու իրեն, միայն եւ միմիայն իր կրծքին տակ քնած առիւծը — եթէ ճշմարիտ է որ ամէն կրծքի տակ քնած առիւծ մը կայ — արթնցնելու բնութիւնն ունենար: Եւ սակայն ամէն անգամ որ խորին եւ ծշտական պաշտումներու արժանի կուռնողի մը մահուան գուժը կուգայ հայրենի լեռներէն, մենք առիւծի զարթնումը չէ որ կը տեսնանք շատերու գէմքին վրայ, այլ յաճախ կը տեսնանք ոչխարի մը գոհունակութիւնը, առիւծ մըն ալ գտած ըլլալուն համար սրճարաններու անկիւնները շատախոսելու, անուն մըն ալ գտած ըլլալուն համար սրբապիղծելու իրենց կուսակցական խայտառակ անապարձութեամբ...:

Ժողովուրդը որ մօտէն կամ հեռուէն այս թշուառականներու ազդեցութեան ենթակայ կըլլայ, պիտի ունենայ վերջապէս լրջութիւնը բոլոր մը ունի ունի գիտելու իր շուրջը եւ խորհելու թէ ո՞ր կը գիտէ ինք, ինչ է իր բրածը եւ ինչ տեսակ մարդոց հետ է իր գործը: Պիտի վճռէ՞ վերջապէս, իր նոր ուղին ճշգրիտ առաջ, կռիւն գաշտը մեկնելէ առաջ, քչիկ

մը տեսնուող, ցարդ իրեն հրամայող, իրեն հետ «տղերք»ով խօսող, ուրիշ կուսակցութիւններու հանդէպ արհամարհանք եւ ատելութիւններ սերմանող մօտաւոր եւ հեռաւոր պարոններու հետ: Այս թանկագին տեսակցութեան վայրկեանը այնքան մօտ է, որ հիմակուրէն կարելի է ըլլալիքը նախատեսել ու վայրկեանը գալուն անմիջապէս ժողովուրդին միանալ, ապտակելու եւ թքնելու իրեն հետ միատեղ:

Եւ այն ալ յարգանքին չափ ու յարգանքին պէս սրբազան պարտականութիւն մըն է ճշմարիտ յեղափոխական գործին հանդէպ:

Ատելութիւնը թշնամիին համար — կը հաստատէ, կը մեծցնէ սէրը զոր ունիք հայրենիքին հանդէպ:

Պատիժը եւ վերջնական թուքը Միութեան խնդրին փորձաքարին տակ դիմակազուրկ եղած փառասիրտներուն, Միութեան հակառակորդներուն համար — կը մեծցնէ, կը մաքրագործէ յարգանքը ճշմարիտ գործողներուն, ճշմարիտ կուռնողներուն հանդէպ:

ԱՀԱՐՈՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Առաջիկայ 1903 Սեպտ. ին պիտի կատարուի Ս. Լիմաժնի Մայր Աթոռին 1600 ամեակը: Այս նպատակաւ կրօնական տարադոյթիւն մը կարգադրելու համար այժմէն պատրաստութիւններու սկսած են:

— Տիգրիսէ գրուած է նաեւ թէ յոյս կայ որ դպրոցները ու կուռնածները եւս տուրին Մայր Աթոռին, պայմանաւ որ առեսերէնը հայրենի համահասարակ պարտաւորէ կերպով դաս տուրի ամէն աստիճանի դպրոցներուն մէջ: Վեհ. Հայրապետը այս պայմանին յիշելով նոր խնդրագիր մը կը մատուցանէ եղբ. Չարին:

— Պոլսոյ թերթերէն կիկանանք թէ Տ. Միքայէլ Թաղաբեան հետ կեցեր է Աղդ. հիւանդանոցին մատուցող շինելէ: Այդ նպատակին իր յատկացուցած 1000 ոսկին կըսուի եղբ. թէ՛ Սամաթիոյ մէջ աղքատներու համար արհեստանոցի մը, կամ Սամաթիոյ եկեղեցիին հոգին վրայ կրպակներու շինութեան պիտի սահմանէ, որոնց հասոյթը յատկանայ նոյն թաղի դպրոցին:

— Աղդ. հիւանդանոցի վերաշինութենէն 563 ոսկի տուելու է, աւոր 63 ոսկին պիտի գործածուի նուիրատուներու անունները եւ վերաշինութեան պարագաները մարմարիոնէ տախտակներու վրայ գրելով Հիւանդանոցի դրան հրկու կողմը հաստատելու, իսկ 500 ոսկին հոգաբարձութեան պիտի յանձնուի նոր շինութեան մը յատկացնելու համար:

— Տ. Մովսէս եպիսկ. ին կիրիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակի պաշտօնն հաստատող պաշտօնագիրը կառավարութենէն ստացուած է, որով Տ. Մովսէս եպիսկոպոս ի մօտոյ Ատանա պիտի մեկնի:

— Պարսկաց Նվրուզի տօնին առթիւ վեհ. կաթողիկոսը շնորհաւորական հեռագիր մը ուղղած է Պարսից Շահին, որ փոխադարձ շնորհակալութիւն յայտնած է:

— Եւրոպայի առաջնորդ Տ. Գէորգ եպիսկ. Իւթի. ճեան Բարիզ հասած է, հոն կառուցանելիք եկեղեցւոյ հիմնարկէքը կատարելու: Տ. Մանթաշեան բացի այդ եկեղեցիէն վարժարան մըն ալ կառուցանելու նպատակ ունի եղբ.:

— Աղէքսանդրիոյ Մելքոնեան առեւտրական տունը 30 ոսկի զըրկած է Պատրիարքարան, Մուշի մէջ որբանոց — արհեստանոց մը բանալու համար:

— Ի. Գ. Թուրանի նախահանքերը անգլիական ընկերութեան մը վստահուելու են 3 միլիոն լուպիի:

— Այս տարի Տիգրիսի Գ. Ժիմ. նաղիոնի դասնիցը աւարտած են 27 աշակերտ, որոնց 18ը Հայեր են:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. անգամ ապագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, եւ հակառակ գնոյն աժանութեանը կը պարունակէ ազգային հին եւ նոր խիստ շատ երգեր: Գին 1 Ֆր.

ՆԷՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱԾՐ, Պուլկարիոյ ազատութենէն առաջ Պուլկար գիւղացիին Թուրքերէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կոյրը կը պատկերացնէ: Շատ հետաքրքրական: Գին 50 ՍԱՆՏ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՉՈՂԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն, գրեց Ղ. Նահապետեան: Զնգչաւ Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար պէտք է դիմել Իրաւունքի խմբագրութեան, բոլորի ծախքը 10ական սանթիմ միատեղ գրկելով: Իսկ գիրքերու արժէքին համար, եթէ ուրիշ գիւրդութիւններ պակսին, կրնոյն ուրիշ նամակագրօք մ 10 0/0 գեղջով:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Մանուկ Տէր Մանուկեան 55-60 տարեկան սպիտակահեր վաճիկ կարմիր Օզգանց գիւղացի, տարիէ մը ի վեր է Սուլիմայէն մեկնած է Ռուսմանիոյ Գրայովայ եւ Քուրտայ-տի Արճէլ քաղաքները եւ անկից ի վեր այնպէս եղած է, իրմէ տեղեկութիւն ունեցողներէ կը խնդրուի հաղորդել հետեւեալ հասցէին:

Մանուկ Յակոբեան

Սուլիմա

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

ԹԻԻԻՐԻՍ

Պիր գալ հափթա մուգատեմ չէհրմիդ թիւք թիւհար վեքի-
լինտէն նիգամը տարեւանտէ բա-
սարթըլարընը ալուպ, մէմէքէթ-
լէրի ճանիպինէ ազիմէթ իթմիշ օ-
լան պիր թագըմ միլլէթտաշարը-
մըզ Տրապիզոնտան կէրի չէվիրի-
լուպ, մէյուսէն թէքրար վարնայա
ավտէթ իթմիշլէր տիր, Պու կէրի
կէլէնլէրին էքսէրիսի 65-70 եւ-
շընտա ֆագիր իթմիշարար տըր,
Շու պիշարէլէր զուրպէթ էլտէ
եէվմիշէ նաֆագատան աճիզ գա-
լուպ, սոն կիւնլէրին պարի քէն-
տի վաթանլարընտա կէշիւմէք ար-
զուսը իլէ, բասարթըմ վէ վարթ
մէսարիֆլէրին էտէմէք իշիւն
կէօմէքլէրին սաթուպ, քէնտի-
լէրին վաթանա աթմագ թէտպի-
րինտէ իքէն, եօլտան կէրի չէվ-
րիլմէլէրի առէպ ու ինսանիշէթին
հանկը քէօշէսինէ սըղապիլիւր,
եէթմիշ եաշընտա պիշարէլէրին
վաթանա աթմէթլէրինտէն նէ՝ մա-
զարթաթ հասըլ օլապիլիւրտի պար-
պար հիւքիւմէթ նէ՝ հիսապա մէպ-
նի պու զատտարըղը իճրա իթտի,
Պուրանըն թիւք զօնսօլուսը (եանի
թիւհար վէքիլի պէ) իլէ՝ վլճտանլէ
բասարթըմ վէրմէք պէհանէսի իլէ՝
անլէրի սօն կէօմէքլէրինտէն տախի
սօյտու. իշլէ չիմտի վէրտիկի
բասարթըլարըն բաշարա գա-
տար զըլմէթի օլմատըղը թահա-
գուգ իթտի իսէ, պարի ալտըղը
բարալարը կէրի վէրէճէ՝ք մի.
եաթօտ պու ֆագիրլէրին շուրա-
տա թաալուշընա զէրրէ գատար
եարտըմ իտէճէ՝ք մի, կէշէն սէնէ
պիր կէնճ գատընը խանէսինտէ
գալըրմագ (՝) թէքիֆինտէ պու-
լընտան պէլ էֆէնտի՝ շիմտի աճէպա
պիր կիւն պիր սաաթ շու ֆագիր.
լէրի գօնաղընտան իշէրի ալաճագ
մը. Չի ֆաթէ, պուլար կէնճ
վէ գատըն տէկիլ, պուլար իխ-
թիեար տըր. անլէրին իւզէրինէ
պիլէ պագմագ իթմէլէրինէք...

— Իզմիրտէն գաշմագ իշիւն պիր
թիւք մէմուրը ֆրանսըզ Օսմանիէն
վարթընա կիրմիշ օլտըղը հալտէ.
զապթիլէ վէ բօլիպէր վարթար կի-
րուպ, մէղքիւր մէմուրը ճէպրէն
տըշարը ալընը ըտըլար, ֆրանսըզ
սէֆարէթի՝ պէյն-էլմիլէլ գաիտէ-
տինէ մուխաթի շու մուսմէլէտէն
տօլայը թարգիլէ վէ իթմիֆա
թալէպ իթմէսինէ ճէվապէն Պապը
Ալի «մէրգուլ մէմուր քէնտի
հիւսնի թիգաթը իլէ վարթարտան
չըզարը» տէմիշ տիր, Սէֆարէթ-
հանէ պու ըւսմի եալանտան թա-
պիի տահա զիլտէ գըղուպ, շէ-
տիտ միւրաճաթլէլ իզմիր զապ-
թիլէ գօմանտանընըն մէմուրիլէթ-
տէն թարտ օլրմասընը թալէպ
իտէճէլի թալա իսպար օլընմըշ
տըր:

— Ֆիրմիլեան նամ սըղա րահիպի
իւսքիւպէ տէսթթ թագտիս իթ-
մէք ալընը բուհանիսի իճրա օլըն-
մըշ, վէ մէրգուլ էլէնվմ իւսքիւպէ
եէթիլմիշ տիր, Եէտինտէ պու-
լընտան պէրաթ մուսմէլէրինէ մահէ-
լին թիւք հիւքիւմէթի անըն իճ-
րաի մէմուրիլէթ իթմէսինէ մու-
վէնէթ իտուպ, սուհուլէթ վէրէ-
ճէք տիր, Ֆագաթ պուլկար վէ
րուլ էհալի ֆիրմիլեանը րահաթ
պըրագմալաճաղար. պու սէպէպէ
մէղքիւր էօլքէնին խրիթիտն մի-
լէթլէրի պէյնինտէ տաիմի սու-
րէթտէ խուսուլմէթ վէ գարընըզ-
լըզ հիւքմ իտէճէք տիր. պու իսէ
թիւք հիւքիւմէթինին իշլէնէ բէք
կիւզէլ եարալաճագ, իշպու մէ-
սէլէտէ րուսիա քէնտի իստաաթը
իլէ իիւրքիւն էքմէլինէ եաղ սիր.
միւշ օլտու:

— Պատրիարք Օրմանեան թէք-
րար Եըլտըղա միւրաճաթլէլ մի-
լէթտաշարըմըզըն եօլըղընա գար-
շը տէվամ իտէն միւսմանէթըն
լաղընը թալէպ իթմիշ, վէ աքսի
հալտէ մէմուրիլէթինէ տէվամ ի-
տէմէլէլէրին պիլտիրմիշ տիր:

— Սէլանիքտէ զէլզէլէ տիւքի
կիւնէ գատար տէվամ իթմէքտէ
իմիշ իսէտէ, իլէ տէֆաթը գա-
տար շիտտէթի օլմայուպ, էհալի
պիր աղ ճէսարէթ քէսպ իտէրէք
խանէլէրէ կիրմէլէ պաշարմըշ տըր,
վիլայէթին տիկէր Նօզթալարըն.
տա տախի սարսընթը հըսս օլըն-
մագտա ըմըշ:

— Մաքէթոնիանըն Սէրէզ շէհ-
րինտէ, մահէլի հիւքիւմէթի՝
Սթանպուլտան ալտըղը էմիր իւզրէ՝
Յուսիս Ծտէ պուլկար մասլահաթ-
կիւզարըն արմասընը վէ պանտէ.
րասընը ճէպրէն էնտիրմիշ իտի.
վէ պուլկար հիւքիւմէթի պուլտան
տօլայը բրօթէթ իթմիշ իտի:

Շիմտիլէ գատար Պուլկարիայա
իզթիֆա վէրիլմէլէլ տիր, Պու
սէպէպէ Սթանպուլ մասլահաթ-
կիւզարըն Մ. կէշէլ Պապը Ալիլէ
եէնէ պիր պէյանմաէ եօլտընը
վէ Սէրէզ միլէսարէֆընըն աղ-
լընը վէ գալտըրըլան պանտէրա-
նըն վէ արմանըն թէքրար մահէ.
լինէ գօնուլմասընը թալէպ իթմիշ
տիր, իւշ կիւն գարթընտա էկէր
պու թալէպի գապուլ վէ իճրա օ-
լընմագ իսէ Մ. կէշէլին Սթան.
պուլտան չըգաճագ օլտըղը թալա
պիլտիրիլմիշ տիր:

— Պիր գալ ալ մուգատեմ է.
րուսաղէմտէ Ս. Յարուլին մէպ-
գըրընտա օրթօտթս վէ կաթուիկ
րահիպէր պէյնինտէ վուգու պու-
լան գալկատան տօլայը՝ մա-
հէլին թիւք ճինայէթ մահէք-
մէսինտէ իճրաի մուհաթէմէ օ-
լընուպ, ալման կաթուիկ րահիպ.
լէր մահէքմ իտիրմիշ տիր, Ֆա-
գաթ Սթանպուլ ալման էլիսինին
իտտաաթը իւզէրինէ, մէղքիւր
հիւքմ ֆէսիս օլընմըշ, Պու մէ-
սէլէ իլէ՝ Շարգտա կաթուիկէլ.

րին համիսի առտ օլընտէ ֆրան-
սանըն թէէսիլի տախի գըրըլմըշ
օլտու. զիրա թիւք հիւքիւմէթի
իթալիա վէ ալման թագաաթը օ-
լան րահիպէր իշիւն ֆրանսըզ էլ-
չիսինին միւտաթէլէսինի գապուլ
իթմէտի, իշլէ պուլտան տօլայը
Երուսաղէմտէքի իթալիա գօնսօլու
գալմագաթը «գօնսիւլ ժէնէրալ»
իւնվանընա հայիզ օլտու:

—

ՏԱԽԻԼԻԹԷ

Իսթիզարազ մուգապէլէնմէսի
56 սէսէ գարշը 111 սէսլէ Սօպ-
րանիէտէն գապուլ օլընմըշ տըր:

Գարապէլիսի, Սթանպուլիստ
վէ իսլամ մպուսլար հիւքիւմէթին
լէհինէ ըլլ վէրմիշլէր տիր, Նա-
րօտեաթ, տէմօկրատ, սօսիալիսթ
վէ չիֆթիսի բարթիլէրինէ մէնսուպ
մէպուլար իսթիզարազ մուխաթի
ըլլ վէրմիշլէր տիր:

— Վիլքէլա ըլլիսի Մ. Տանէֆ
Բօլիքիլէ Գօլէսի. ին մուխաթի
իլէ կէօլիլ շէմինտէ աթիտէքի
պէյանաթտա պուլընմըշ տըր:

«Յէլա. իլէնսին Բէթրապուրկ-
տա պուլընտըղարը Էնանտէ Պուլ-
կարիանըն իսթիզարալիլէթ ու գը-
րալիլէթ իլան իթմէսինտէն ալա
պահս օլընմաթը տըր, Թիւրքիա
իլէ տօսթանէ տաղրանմագ պիզէ
ֆաիտէլի ալի քի պիր թագըմ
իթմիշլէթ էլաէ իտէլիմ:

«Բէթրապուրկտա պուլկար
մասլահաթ միւզարը Մ. Սթանլէ.
ֆին էլիլ իւնվանընա հայիզ իտի-
մէսի, քէնտի տիրայէթ ու մհա-
րէթինէ պիր միւքէթաթ օլմագ ի-
շիւն տիր, րուսիա տախի իս-
թիզարալիլէթ պուլմագտան էվլէլ
Բարիզ մասլահաթ կիւզարընա էլ-
չի իւնվանը վէրմիշ իտի:

«Չարըն Սօֆիայա տալէթ օ-
լընմաթը պապընտա սէօլլէնիլէն-
լէր Էսասըզ տըր, Բրէնա Չարը
Սօֆիայա տալէթ իթմէտի. եա-
լընը միլէթէլէթ Ալէքսանտր ի-
քիւնճի Չարըն նամընա Սօֆիատա
եարըլան հէրքէլին ըւսմի քիւշա-
տընտա՝ Չարա վէքէլէթէն՝ իմ.
բէրաթը խանէտանընտան պիր
բրէնսին Սօֆիայա թէշիթի իտէ-
տէճէլի մուգարթէր տիր: Տէտօ
Յանքօվ շախմէն Չարըն հուգու-
րընա գապուլ օլընմասընտա՝ պուլ-
կար միլլէթինին Չարը Սօֆիատա
կէօրմէք արգուաթընտա պուլընտը-
ղընը իֆատէ իթտի իսէ տէ, պիր
ճէվապ ալմատը:

«Քէզա րուսիա վէ Պուլկարիա
պէյնինտէ աքէրի պիր ահանմաէ
թանդիմ օլընտըղընա տալիլ չը-
գան սէօլլէր քիւլիլէն Էսասըզ
տըրլար:

«Րուս մէհաֆիլի սիյասիլիսինտէ
կէզէն էֆթեար՝ Աւստրիա վէ րու-
սիա պէյնինտէ ճարի օլան իթի-
լաֆ միւհիպ՝ Պալգանտա աշվալը
հաղրէրի մուհաթագա իթմէք
տիր»:

— Ճուլա էրթէսի կէճէսի շէհ-

րիմիզ Պալգագագարընտա հարիգ
զուհուր իտուպ, իւշ ալապա տիւ-
քեանլար հանտը. պուլարտան ի-
քիսի սիւկիլիլէթտա ըմըշ, ֆա-
գաթ տիկէր պիրի՝ պիլա սիւկիլի-
թա՝ Գրիգոր Սաքէլեան նամ
թահմիսին թէճարէթ կեհալ օլուպ,
եալընը 2 չուվալ շէքէր գուրթա-
րապիլմիշլէր տիր, Եանկըն Էանա-
սընտա մէրգուլ տէրին ուլգուտա
պուլընուպ, աղ գալա քէնտիսի
տախի տիւքեան իշէրսինտէ հա-
նաճագ ըմըշ:

—

ԲՈՒՍԻՍ

Գօնթ թօլաթոյ մուգատըղա օլ-
տըղը ուզուն խաթալըղտան զալ-
րը սըհէլէթ պուլարագ քէնտի խա-
նէսինէ աթմէթ իթմիշ տիր, Չար
մէրգուլմըն նէզտիլէ կէշէն կիւն
պիր մէնէրալ եօլալուպ, իսթիֆա-
րը խաթըր իթտիրմիշ տիր, Բէ-
վալէթէ կէօրէ՝ Չար թօլաթոլը
հուգուրընա գապուլ իտուպ, իս-
լահաթ իշիւն անըն էֆթեարընը
ալաճագ ըմըշ:

—

ԻՆԿԻԼԻԹԻՐԱ

Միւլթէվէքեաթ նաղըրը Մ.
Չէնպըրլէն արապաթը իլէ կիտէր
իքէն, գաղաէն աթը իւրքմիշ վէ
քէնտիսի եէրէ տիւշէրէք անլը ա-
ղընա եարէլէնմիշ տիր, իքի կիւն.
տէն պէրու Չէնպըրլէն խաթա-
հանտէ թէտալի օլընմագտա
տըր:

Աֆրիգա մուհարէպէսինէ պաշ-
լըճա սէպէպ օլան պու գաթ շու
վասիլա իլէ եարէլէնմէք, աղը
չէքմէք նէ միւշքիլ օլտըղըն ան-
լալաճագ տըր:

— Գրալ իտուարտ չիֆաթէլիւր
օլմագտա օլուպ, թսճ կէլինմէք
ալի ու զիլնէթինին կիւն էվլէլ
իճրա օլընմասընա արգու պէյան
իթմիշ տիր:

—

ՏԷՄԻՐ ՖԱՊԻՐԳԱՍԸ

ՄԻՍԱԲ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՎԷ ՇԻՐԲԷԹ

Իռալուքտա

Ֆագիրգալըղտա «րուլէթ» թապիր
օլընտան տէմիր քէրէնքլէր եարըլմագ-
տա օլուպ, աղըրըզ վէ սաղալմըզ
ճիւլէթինէ էվրոպաա իմալ օլընտա-
լարտան տահա մէօքէթ օլտըղը կիպի,
ֆիլաթլարը տախի էվլէն տիր:

Քէզա պիլալար իշիւն տէմիր թա-
վէրլէր վէ սալիլ էտէվուլըն նէզ-
տիմիզէ հաղըր պուլընտըղընը, վէ
ալընտան սրալիլէրին պիլա թէլիլի
իճրա ու իրալ օլընմագաղըն հէօր-
մէթիլին էհալիլ իլան իտէրիզ:

Միսալ Գապարեան եւ ընկ.

—

ԹԱՍՏՐՈՆ ՊՈՐԻՍ

«Վէսէլլօ» Հալղերասանական խուճը
պիտի ներկայացնէ վաղը Երեկոյ ժամը
9ին առաջին անգամ ըլլալով «Ֆաուստ»
ողբերգութիւն 4 արար 2 պատկեր:
Երգ եւ պար Օր. Բօզալի եւ Պ. Գ.
Թալիսեանի կողմէն:
Միջադաշարժ գաւեշտ մը Պ. Պէն-
լանի կողմէն:
Կիրակի զիշիւր, պիտի ներկայացնէ
«Անդալուզիլին» տրամ-գօմէտի 4 ա-
րար:
Երգ եւ ՊԱՐ:
Խիստ իմադաշարժ գաւեշտ մը:
Одиозорникъ Н. Драгулевъ
Печ на Хр. Н. Войниковъ—Варна